



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 19 ՄԱՅԻՆ, 2025

### ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիւ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ

**Ինձ օգնութիւն ի տեառնէ Աստուծոյ խորայելլին եկեացէ:**

**Չի՛նա է տէր տերանց եւ Աստուած յաւիտենից.**

**Ինձ օգնութիւն ի տեառնէ Աստուծոյ խորայելլին եկեացէ:**

### ԱՂՈՐՔ

Օգնէ մեզի, Տէ՛ր, օգնէ մեզի, ով մեր փրկիչ Աստուածը, Քու մեծ անունիդ փառաւորութեան համար: Տէ՛ր, փրկէ մեզ եւ քաւէ մեր մեղ-մերը, Քու սուրբ անունիդ համար: Սուրբ եւ պատուական իսաչիդ հովա-նիին տակ պարսպուած եւ խաղաղութեան մէջ պահէ Քեզի ապաւինած եւ Քեզի յուսացող ժողովուրդդ: Փրկէ մեզ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու Քեզ, Հօրդ եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածամին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթու-թեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈՐՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**

**Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:**

**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:**

**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն եւ նեղելոց:**

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

**Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**

# ՍԱՂՄՈՍ 81

## ՏՕՆԱԿԱՆ ԵՐԳ

Ֆնծացե՛ք Աստուծո՛վ, որ մեր պաշտպանն է,  
ուրախութեամբ աղաղակեցե՛ք մեր հայրերուն Աստուծոյն:  
Սկսեցե՛ք նուագը, դափ զարկե՛ք, մեղմանոյշ ֆնարն ու տաւիղը  
հնչեցուցե՛ք:

Փող հնչեցուցե՛ք նորալուսնին առիթով,  
փող հնչեցուցե՛ք լիալուսնին՝ մեր տօնին առիթով:

Ասիկա կանոն է Աստուծոյ ժողովուրդին համար,

Աստուծոյ հրամանն է՝ Յակոբի սերունդներուն:

Իր պատուիրանն է՝ Յովսէփի յետնորդներուն,

երբ անոնք դուրս կու գային Եգիպտոսէն:

Լսեցին լեզու մը, որ չէին լսած, եւ որ կ'ըսէ.

»Ես ֆու ուսէդ վար առի բերը,

ձեռքերդ ազատագրեցի ստրկական աշխատանքներէն:

Նեղութեանդ մէջ երբ օգնութեան կանչեցիր ազատեցի քեզ,

ամպրոպին մէջէն պատասխան տուի քեզի,

քեզ փորձեցի Մերիպայի աղբիւրին ֆով:

Լսէ ինչ որ կը պատուիրեմ, ով ժողովուրդ իմ,

երանի թէ լսես ինձի, ով ժողովուրդ Աստուծոյ:

Զրլլայ բնաւ, որ օտար աստուածներ ունենաք,

եւ չըլլայ որ սուտ աստուծոյ մը երկրպագութիւն ընէք:

Ես եմ ֆու Տէր Աստուածդ,

որ Եգիպտոսէն հանեցի քեզ:

Լայն բաց բերանդ, եւ պիտի կերակրեմ քեզ:

Բայց ժողովուրդս մտիկ չըրաւ իմ կոչս,

Իսրայէլը չուզեց ինձի հնազանդիլ:

Ուստի ձգեցի, որ մնան իրենց յամառութեան մէջ,

եւ ընեն ինչ որ իրենց կամքը կ'ուզէ:

Եթէ իմ ժողովուրդս մտիկ ընէր գիս,

եթէ Իսրայէլ ապրէր այնպէս՝ ինչպէս ես կ'ուզեմ,

եւ ինքս անոր թշնամիներուն դէմ պիտի ելլէի,

եւ շուտով անոր ոսոխները պիտի ընկնէի«:

Արդարեւ Տէրը ատողները անոր առջեւ գլխահակ պիտի մնան,

եւ ասիկա պիտի ըլլայ անոնց յաւիտեանական դատապարտութիւնը:

Մինչդեռ ընտիր ցորենով պիտի կերակրէ իր ժողովուրդը,

եւ ժայռէն մեղր բղխեցնելով պիտի յագեցնէ զանոնք:



**ՏՕՆԱԿԱՆ ԵՐԳ**

Այսօրուան Սաղմոսին վերբազիրը կու գայ յուշելու, թե փօնի մը առիթով երգուած Սաղմոս մըն է, եւ այդ փօնին ուրախութեան արքայայարութիւնը: Միւս կողմէ, սակայն, ամէն մէկ փօն նաեւ յիծեցում է մտածելու քանի մը կէտերու մասին: Առաջին, փօնին իմաստը, անոր նպատակը, ի՞նչ կը յիշեցնէ: Երկ-րորդ, փօնին հետ կապուած թելադրանքը:

Սաղմոսը կը սկսի հետեւեալ բառերով, «Տնծացէք, ուրախացէք» ինչո՞վ, Աստուծով, որովհետեւ Ան մեր պաշտպանն է: Երկրորդ, ուրախութեամբ աղաղկելու մեր հայրերուն Աստուծոյն: Այսպէղ սկ-նարկութիւնը կապի մասին է, անցեալի կապը որ Աստուած սրբեղծեց անոնց հայրերուն հետ, Աբրա-համին, Իսահակաին եւ Յակոբին: Այլ խօսքով, սերունդներու վրայ փարածուած կապի ու յարաբերու-թեան մասին է խօսքը: Նաեւ Աստուծոյ հաւատարմութեան մասին է, որ այդ կապը միշտ ալ պահեց, հա-կառակ գալիք սերունդներուն յամառութեան: Սաղմոսերգուն նաեւ կը յիշեցնէ, որ նուագով, դափ զար-նելով, փող հնչեցնելով, քնարով ու քափողով: Որովհետեւ այս նուագարաններուն գործածութիւնը ուրա-խութեան ու ցնծութեան արքայայարութիւն է: Ի վերջոյ, փող հնչեցնելով: Հին Կրակարանին մէջ կը կարդանք, որ Աստուած փարբեր առիթներու փող հնչեցնել կու փար, եւ իւրաքանչիւր փողի հնչում, բան մը կը յիշեցնէր, յաղթանակի, պարբաստութեան, փօնի, եւ այլն: Այս անգամ յիշեցումը նորալուսնի եւ լիալուսնի մասին է, որ դարձեալ յիշեցում է: Երբ Իսրայէլի ժողովուրդը դուրս եկաւ Եգիպտոսի սպր-կութենէն այդ ամիսը ամիսներու առաջինը նկատուեցաւ: Որովհետեւ անկիւնադարձ մը փողի ունեցաւ ժողովուրդի կեանքին մէջ: Նորալուսինը եբրայական օրացոյցով ամսամուտ կ'ըլլար եւ այդ առիթով փող կը հնչեցնէին եւ զոհեր կը մատուցանէին: Իսկ լիալուսնին, որ արդէն փօնն էր: Անցեալին այսօրուան իմաստով օրացոյց, ժամացոյց չկար, այլ փողը յիշեցում էր այդ բոլորին: Այս բոլորը Աստուծոյ կողմէ փրուած հրաման ու կանոն էին Յակոբի սերունդին եւ Յովսէփի յաջորդներուն: Հետաքրքրական է, ինչո՞ւ Յովսէփի անունով: Որովհետեւ երբ Եգիպտոսէն ելան, անոնք Յովսէփի անունով ճանչցուած էին: Յա-կոբի սերունդն էին, բայց Յովսէփ որպէս անցեալի կառավարիչը անով ճանչցուած էին: Ուրեմն, յիշեցումը անոնց ազատագրումը Եգիպտոսէն Աստուծոյ առաջնորդութեամբ, պաշտանութեամբ:

Ահա այդ միջոցին անոնք լեզու մը լսեցին, Աստուծոյ ձայնը, որ կու փար հետեւեալ պատգամը. «Ես քու ուսեղ վար առի բեռը, սպրկական աշխատանքներէն ազատագրեցի, նեղութեանդ մէջ օգնու-թեան հասայ, ազատեցի, պարասխան փութի»: Եւ ահա անապատին մէջ Տէրը փորձեցին Անկէ շուր եւ հաց ուզելով. Տէրն ալ զիրենք փորձեց, անոնց հաւատարմութիւնը քննելով: Երբ Տէրը օգնութեան հա-սաւ եւ երբեք զիրենք չլքեց, բայց նաեւ պատուիրեց որ զԻնք լքելով ուրիշ աստուածներու երեւէ չերթան: Եւ ահա Աստուած այդ պատուիրը կու փայ, բայց նաեւ զիպէ որ պիտի չլսեն, զիպէ որ պիտի երթան: Եւ հիմա կրնանք հետեւեալ հարցումը հարցնել, եթէ Աստուած զիպէ, ինչո՞ւ արգելք չըլլար, որ չերթան: Կը մոռնանք, որ Աստուած որ մարդս սրբեղծեց Իր պատկերին եւ նմանութեան համաձայն ազատ, ուրեմն Աստուած կը յարգէ մարդուս փրուած ազատութիւնը, միւս կողմէ, նաեւ Ան կը սպասէ, որ մարդը իր ազատ կամքով Աստուծոյ վերադառնայ, իր ազատ կամքով զԱստուած սիրէ, եւ ոչ պարտարուած: Որով-հետեւ պարտադրուած սէրը, սէր չէ: Իսկական ու ճշմարիտ սէրը ազատ կամքէ բխած սէրն է:

Աստուած դարձեալ կը յիշեցնէ, որ Ինքն էր զիրենք Եգիպտոսէն դուրս բերողը, Ինքն է իրենց Տէր Աստուածը, ուրիշ աստուածներու երեւէ չերթան: Նաեւ կը յիշեցնէ, որ լայն բանայ բերանը որպէսզի Աստուած կերակրէ զիրենք: Այլ խօսքով, ոչ թէ միայն ազատեց զիրենք, այլ նաեւ շարունակութիւնը մինչ-էւ վերջ հոգ փանելու: Աստուած միայն մէկ կամ երկու դժուարութեանց մէջէն դուրս հանելու համար չկայ, այլ Ան միշտ պարտասար է մեզ խնամելու, կերակրելու: Բայց արդիւնքը եղաւ, այնպէս ինչպէս Տէրը Ինք զգուշացուցած էր: Ժողովուրդը մտիկ չըրաւ, եւ չուզեց հնազանդիլ: Աստուած ալ թողեց իրենց յա-մառութեան մէջ մնան: Այնպէս ինչպէս Քրիստոս առիթով մը Երուսաղէմի վրայ պիտի լար ըսելով. «Երուսաղէմ, Երուսաղէմ, քանի քանի անգամներ ուզեց քեզ հաւաքել, այնպէս ինչպէս հարը իր ձագերը թելերուն փակ, բայց չուզեցիր, ահա փունդ աւերակ պիտի ըլլայ»: Աստուած ալ կը ձգէ, որ մեր յամառու-թեան մէջ մնանք: Այնպէս ինչպէս բժշիկը կը թելադրէ հիւանդին հեռու մնալու, բայց եթէ հիւանդը յա-մառօրէն մնայ իր ընթացքին մէջ, ո՞վ է մեղադրելին, հիւանդը թէ բժշիկը: Որովհետեւ Աստուած կը յիշեցնէ, որ եթէ ժողովուրդը մտիկ ըներ, Աստուած Ինք անոր թշնամիներուն դէմ պիտի ելլէր եւ շուտով ոտխները ընկճէր: Այս բոլորէն յետոյ, արդիւնքը յայտնի է, Տէրը մերժողները, արողները զխահակ պի-տի մնան, մինչ հաւատարիմները ընտիր ցորենով պիտի կերակրուին: Այնպէս ինչպէս Քրիստոս պիտի ըսէ. «Ով որ հաւատարայ պիտի փրկուի, իսկ ով որ չհաւատարայ արդէն իսկ դատարարարուած է չհաւատարուն համար»: Ահա այս Սաղմոսը բոլոր ժամանակներու համար ըսուած յիշեցում է, որպէսզի օտար աստուածներու երեւէ չերթանք, այլ յիշենք, թէ ինչպէս դուրս եկանք նեղութենէն, ով մեզ դուրս բերաւ այդ նեղութենէն, եւ փակաին պարտասար է մեզ կերակրելու: